ԴԱՍ 6. ԳԼՈՒԽ 2 — ԹԻՎԱՏԻՐԻ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԸ

Հայտնություն 2:18-29
Նամակ Թիվատիրի

Նոր կտակարանյան ժամանակաշրջան
New Testament Period

- Եփեսոսը՝ մեծ քաղաքական կենտրոն էր
- Զմյուռնիան առևտրի մեծ կետնրոն էր
- Պերգամոնը՝ մեծ կրոնական կենտրոն
- Թիվատիրը՝ հայտնի է եղել իր Մանրագործվածքներով, հատկապես մանուշակագույն ներկերի եւ նրա առեւտրի արտադրությամբ: (մանուշակագույն ծածկոցը խորհրդանշում էր կառավարող իշխանությունը)

Ստամբուլից Իզմիր գնացող ճանապարհը անցնում է մի փոքրիկ և անշուք քաղաքի՝ Ակշիսարի (բնակչությունը՝ 30,000), միջով, որը հիմա զբաղեցնում է այն տարածքը, որտեղ մի ժամանակ կանգնած էր կարևոր ռազմական քաղաք Թիվատիրը: Նոր Կտակարանի ժամանակներում, այդ քաղաքը գտնվում էր Պերգամոն, Սարդիս և Զմյուռնիա տանող երեք գլխավոր ճանապարհների խաչմերուկում:

Գործ. 16:13-15 - 13 Եւ շաբաթ օրը քաղաքից դուրս գնացինք դէպի գետը, ուր որ սովոր էին աղօթք անելու. Եւ նստած խօսում էինք ժողովուած կանանց հետ: 14 Եւ մի կին՝ անունը **Լիդիա**՝ ծիրանավաճառ (seller of purple), **Թիվատիր քաղաքից**, աստուածավախ, լսեց. որի սիրտը Տէրը բացեց, որ Պօղոսի խօսածները մտիկ անէ: 15 Եւ երբոր նա եւ իր տունը մկրտուեց, աղաչեց ասելով. Եթէ ինձ Տիրոջ հավատացած համարէք, մտէք իմ տունը՝ մնացէք. եւ բռնադատեց տարաւ մեզ:

1½ գրամ մաքուր ներկ մղելու համար հարկավոր է եղել մոտավորապես 12.000 խեցգետին: Մեկ գրամ մանուշակագույն ներկը գնահատվում էր ավելի քան տաս գրամ ոսկի եւ մեկ մանուշակագույն բուրդը որը ներկված էր մանուշակագույնով, կարող էր վաճառվել 1000 (denarii) գումար որը կազմում էր բանվորի երեք տարվա աշխատավարձը: Նման նյութով պատրաստված մի ամբողջ թիկնոց կարող է արժենալ երեք անգամ ավել:

18) Եվ Թիվատիրում գտնվող եկեղեցու հրեշտակին գրի՛ր.

1. **Թիվատիր – նախկինում կոչվում էր «Հունարեն thugatér, դստեր, կին» «Սեմիրամիս Semiramis – ծովի պարգեւը, երկնքի թագուհի» (Նեմրութի/«անհնազանդ» կինը, Թամուզի մայրը):**

2. **Քրիստոսի տիտղոսը – Title of Christ**

   «Այսպես է ասում **Աստծո Որդին**, որ կրակի բոցի պես աչքեր ունի, և Նրա ոտքերն ազնիվ պղնձի նման են»:

   «Աստծո Որդի». Հայտնությունում միայն այստեղ է նշված: Պետրոսի դավանելը (Մաթ. 16:16-18) համեմատած «Երկնքի Թագուհու» (Հեզաբե՞լը): Հիսուսը հավաստում է զորությունն ու դատելու իշխանությունը. «կրակի բոցի պես աչքեր, ոտքերը՝ ազնիվ պղնձի նման» (նմանություն) = դատաստանի խորհրդապատկերն է: Սա կենտրոնական նամակն է (յոթ նամակների մեջ):

3. **Գովասանք – Commendation**

   19) Գիտեմ քո գործերը և սերդ ու ծառայությունդ և քո հավատն ու համբերությունը, և որ քո վերջին գործերն առաջիններից շատ են:

   Նա միշտ լավատեղյակ է մեր գործողություններից ու վարքից: Առաջին բարի լուրը. «գործեր…սեր…հավատ…ծառայություն…համբերություն…գործեր». Հիսուսը նշում է վեց դրական բաներ… և ասում է, որ դրանք բարելավվում են:

4. **Անհանգստություն – Concern**

   20) Բայց քո դեմ որոշ բաներ ունեմ, որովհետև դու թույլ ես տալիս այդ **Հեզաբել կնոջը**, որ ինքն իրեն մարգարեուհի է անվանում, Իմ ծառաներին ուսուցանել ու մոլորեցնել, որ պոռնկություն անեն ու կուռքերին զոհ արված բաներ ուտեն: 21) Եվ Ես նրան ժամանակ տվեցի, որ նա ապաշխարի իր պոռնկության համար, բայց չապաշխարեց: 22) Եվ Ես նրան անկողին եմ գցելու և նրա հետ շնացողներին՝ **մեծ նեղության մեջ**, եթե իրենց կատարածների համար չապաշխարեն:

Այս եկեղեցու հիմնական մեղքը պարզապես նրանում էր, որ նրանք դեմ չէին կանգնում այս կնոջը, ով նրանց տանում էր կռապաշտական վարդապետությունների և գործունեության (Գործք. 15:29 պատվերներ)։ Եղիան Կարմեղոս սարի վրա (Գ Թագ. 18)։

- Մեծ Նեղությունների առաջին նշումը («եթե չապաշխարեն».
- Միայն չապաշխարող եկեղեցին է մտնելու դրա մեջ)։

Հայ. 7:14 - 14 Եւ ես ասեցի նորան. Տէր, դու գիտես. եւ նա ասեց ինձ. Սորանք են որ գալիս են այն **մեծ նեղութիւնից**, եւ իրանց հանդերձները լուացին եւ սպիտակացրին Գառի արիւնովը։

Հեզաբել

Հեզաբելը դուստրն էր Աստարովթի քուրմ, Սիդոնի թագավոր Եթբաաղի, (Eth-Baal, King of Sidon, Priest of Astarte) ով սպանեց իր նախորդին՝ Փելեսին, գահին տիրանալու համար։ Հեզաբելն ամուսնացավ Աքաբի հետ և շահավետ պայմանագիր կնքեց Իսրայելի և Փյունիկիայի միջև։ Հեզաբելը փորձեց ոչնչացնել Եովայի (YHWH-ի) մարգարեներին (Գ Թագ 18:13)։ Հեզաբել թագուհին բոլորին գերազանցել էր. Հին Կտակարանում ոչ մի կին նրանից ավելի խորամանկ կամ ավելի հանդուգն, կամ ավելի անբարո չի եղել… նա հողակտորներ էր ձեռք բերում «ինկվիզիցիայի» միջոցով։ Կարդա Նաբովթի այգու դեպքը (Գ Թագ 21)։

- Սա միջնադարյան եկեղեցու մի վառ պատկեր է հազար տարվա ժամանակահատվածով, ներառյալ Խավար Դարաշրջանը։

- Համեմատեք Հեզաբելին. «Կինը եւ թթխմորը» առակով Մատթէոս 13. Ղևտաց. 2; 1 Կորնթ. 5: 7, 8).

1 Կոր. 5:7-8 - 7 Դէն գցեցէք հին խմորը, որ նոր զանգուած լինէք, ինչպէս որ անխմոր էք. որովհետեւ մեր զատիկը մորթուեց մեզ համար՝ Քրիստոսը։ 8 Ուստի տօն կատարենք ոչ թէ հին խմորով, եւ ոչ էլ չարութեան եւ անզգամութեան խմորով, այլ մաքրութեան եւ ճշմարտութեան չխմորուածով։

Նաբովթի այգին. Գ Թագ. 21

- Աքաբ թագավորը ցանկանում էր Նաբովթի այգին։
- Հեզաբել թագուհին ինկվիզիցիա է կազմակերպում (սուտ վկաներ, մեղադրանք և մահապատիժ)։
- Թագավորը զավթում է Նաբովթի այգին։
- Նաբովթի ժառանգները նույնպես սպանվում են։

23) Եվ նրա զավակներին պիտի մահով սպանեմ, ու բոլոր եկեղեցիները պիտի իմանան, թե Ես Նա եմ, որ նրանց **երիկամներն ու սրտերն եմ քննում** և ձեզնից յուրաքանչյուրին հատուցելու եմ ձեր գործերի համեմատ։

5. Քաջալերանք – Exhortation

24) Ասում եմ ձեզ, ինչպես նաև մյուսներին, որ Թիվատիրում են գտնվում, **ովքեր** որ չունեն այս վարդապետությունը, և **ովքեր** չճանաչեցին սատանայի խորությունները (ինչպես ասում են), ձեր վրա ուրիշ ծանրություն չպիտի դնեմ։ 25) Սակայան, պահեցե՛ք այն, որ արդեն ունեք, **մինչև Ես գամ։**

> **1 Կոր. 2:10,16 -** 10 Բայց մեզ հայտնեց Աստուած իր Հոգովը. որովհետեւ Հոգին ամեն բաները քննում է, եւ Աստուծոյ խորքն էլ։ 16 Որովհետեւ ո՞վ գիտաց Տիրոջ միտքը, որ բան սովորեցնէ նորան. բայց մենք Քրիստոսի միտքն ունինք։

- Սա յոթ նամակների առաջին բացահայտ հղումն է Քրիստոսի վերադարձի մասին։

6. Խոստում հաղթողներին – Promise to the Overcomer

26) Եվ նա, ով հաղթի և Իմ գործերը պահի մինչև վերջ, նրան **իշխանություն** եմ տալու ազգերի վրա. 27) Եվ նա պիտի հովվի նրանց **երկաթե գավազանով**, նրանք փշրվելու են բրուտի ամանների պես.

այնպես, ինչպես Ես Իմ Հորից ստացա։ 28) Եվ Ես նրան պիտի տամ **առավոտյան աստղը**։

- «Իշխանությունն ազգերի վրա» Հեզաբելի նպատա՞կն էր։
- «**Երկաթե գավազան**».

  Սաղ. 2:7-9 - 7 Տէրն ասեց ինձ. Դու իմ որդին ես, ես այսօր ծնեցի քեզ.
  8 Խնդրիր ինձանից, եւ ես հեթանոսները քեզ ժառանգություն կտամ,
  եւ երկրի ծայրերը՝ քեզ ստացուածք։ 9 Երկաթի գավազանով կջարդես
  նորանց, եւ բրուտի ամանի պէս կփշրես նորանց։

- «**Մեզ է տրված**».

  Սաղ. 110:2 - 2 Տէրը Սիօնից կուղարկէ քո զօրության գավազանը.
  տիրապետիր քո թշնամիների մէջ։

  1 Կոր. 6:2-3 - 2 Կամ թէ չգիտէ՞ք որ սուրբերն աշխարհքս կդատեն. եւ
  եթէ ձեզանով աշխարհքը դատվում է, ապա չէք արժան անարգ
  բաների դատաստան անելու։ 3 Չգիտէ՞ք որ մենք հրեշտակներին
  կդատենք. էլ որքա՞ն աւելի երկրաւոր բաները։

  Դան. 7:18,27 - 18 Իսկ թագաւորութիւնը առնելու են Բարձրեալի
  սուրբերը եւ ժառանգելու են թագաւորութիւնը մինչեւ յաւիտեանս
  յաւիտենից։ 27 Եւ թագաւորութիւնն ու իշխանութիւնը եւ բոլոր
  երկնքի տակին եղող թագաւորութիւնների մեծութիւնը պիտի տրուի
  բարձրեալի սուրբերի ժողովրդին. նորա թագաւորութիւնը
  յաւիտենական թագաւորութիւն է եւ բոլոր իշխանութիւնները պիտի
  նորան ծառայեն եւ հնազանդեն։

- «**Գավազան**» = թագավորության գավազան։

  Եբր. 1:8 - 8 Բայց Որդուն ասում է, Քո աթոռն, ով Աստուած, մինչեւ
  հավիտեանս հաւիտենից է. քո թագաւորության գավազանը ուղիղ
  գավազան է։

- «**Առավոտյան աստղ**» = նախքան արևածագը

Հայ. 22:16 - 16 Ես Հիսուսս իմ հրեշտակն ուղարկեցի, որ վկայէ ձեզ այս բաները եկեղեցիների մասին. Ես եմ Դաւիթի արմատը եւ սերունդը եւ առաւօտեան պայծառ աստղը։

2 Պետ. 1:19 - 19 Եւ մարգարէական աւելի հաստատ խօսքն ունինք, որ եթէ նորան մտիկ անէք, լաւ կ'անէք, ինչպէս մի ճրագի որ լոյս է տալիս մութ տեղը, մինչեւ որ ցերեկը լուսանայ եւ լուսաբերը ծագի ձեր սրտերումը։

Հակոբի Աստղը (Բաղաամ)։

Թվ. 24:17 - 17 Տեսնում եմ նորան, բայց ոչ հիմա, Զննում եմ նորան, բայց ոչ մօտից. Յակոբից մէկ Աստղ է ծագում, Եւ Իսրայէլից մի գաւազան է բարձրանում. Եւ Մովաբի կողքերին զարկում, Եւ Սեթի բոլոր որդիներին բնաջինջ անում։

Ո՞վ է «Հաղթողը»։

«Քանի որ ամէն ոք, որ Աստծուց է ծնուած, հաղթում է աշխարհին։ Եւ ա՛յս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հավատը։ 5 Եւ ո՞վ է, որ յաղթում է աշխարհին, եթէ ոչ նա, ով հաւատում է, որ Յիսուսն է Աստծու Որդին։»։

Ա. Հովհ. 5։4,5։

7. Ավարտ – Close

29) Նա, ով ականջ ունի, թող լսի, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին։

Խրատական մակարդակ (բոլոր եկեղեցիներին)
Admonitory Level (to all churches)

- ✓ Եփեսոս – Նվիրում, ոչ թե միայն վարդապետություն
- ✓ Զմյուռնիա – Տոկալ (դիմանալ) նեղություններին
- ✓ Պերգամոն – Մաքրեզերծել դեսպանության ծառայությունը
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն

Անձնական կիրառություն (Հոմոլետիկա)
Personal Application (Homiletics)

- ✓ Եփեսոս – Անտեսված առաջնայնություններ
- ✓ Զմյուռնիա – Սատանայական ընդդիմություն
- ✓ Պերգամոն – Հոգևոր փոխզիջում
- ✓ Թիվատիր – Հեթանոսական գործունեություն

Խոստում հաղթողներին
Promise to the Overcomer

- ✓ Եփեսոս – Ուտել Կենաց ծառից
- ✓ Զմյուռնիա – Չվնասվել երկրորդ մահից
- ✓ Պերգամոն – Մանանա, քար, անուն
- ✓ Թիվատիր – Իշխանություն ազգերի վրա

Մարգարեական պատկերը
Prophetic Profile

- ✓ Եփեսոսը ներկայացնում է Առաքելական Եկեղեցին։
- ✓ Զմյուռնիան ներկայացնում է հալածվող եկեղեցին։
- ✓ Պերգամոնը ներկայացնում է «ամուսնացած» եկեղեցին
- ✓ Թիվատիրի եկեղեցին ներկայացնում է (Միջնադարյան) Եկեղեցին։ Պապական իշխանությունը։

Հաջորդ դասը

Կարդա 2-րդ և 3-րդ գլուխները։ Ուրվագծիր Սարդիկեի եկեղեցու նամակը (Հայտն. 3:1-6)։ Ո՞րն էր նրանց առաջնային կարիքը։ Որո՞նք են այս նամակի առանձնահատկությունները։